

C. MUTAFIAN, Un aperçu sur le génocide des Arméniens.

Paris, 1995, 31 p

Կ.ՄՈՒԹԱՅՅԱՆ, Ակնարկ Չայոց ցեղասպանության վրա

Փարիզ, 1995, 31 էջ

Չայոց ցեղասպանությունը ոչ միայն մեր դարի մեծագույն ողբերգությունը, այլև անարդարությունն է: Ահա թե ինչու Մեծ եղեռնի յուրաքանչյուր տարեկից հայրենիքի և, մանավանդ, արտերկրի հայությունը պատեհ առիթ է դարձնում ոչ միայն միլիոնավոր անթաղ նահատակների սուգը սգալու, այլև հայոց անժամկետանց դատը, պահանջատիրությունը մի անգամ ևս արծարծելու համար: Այդպես է վարվել ֆրանսահայությունը՝ ցեղասպանության ութսունամյակի կապակցությամբ. ազգային եկեղեցու հովանավորությամբ, հատուկ հանձնաժողով է ստեղծվել, ուր ներգրավվել են քաղաքական բոլոր կուսակցությունների, տարբեր ընկերությունների ներկայացուցիչները: Գործադիր այդ մարմինը ամենից առաջ հարկ է համարել ֆրանսերեն, ապա նաև իտալերեն լույս ընծայել «Ակնարկ հայոց ցեղասպանության վրա» աշխատությունը, որի հեղինակը Կլոդ Մութաֆյանն է: Նա մասնագիտությամբ թվաբան է, բայց ժամանակի ընթացքում դարձել է Չայաստանի, մասնավորապես Կիլիկիայի պատմության նախանձախնդիր, դասախոսական աշխատանքի անցել Սորբոնի համալսարանում, ընտրվել է մեր հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ:

«Փոքր Ասիայում, գրքի ներածականում գրում է Մութաֆյանը, հայերն ապրում էին հազարամյակներ ի վեր: 19-րդ դարի վերջին նրանց թիվը մոտավորապես երկու միլիոն էր: Քառորդ դարի ընթացքում, ըստ էու-

թյան բոլորը վերացան: Ի՞նչ տեղի ունեցավ բնական արհավի՞րք, համաճարա՞կ: ...Պատասխանն ամփոփվում է մի բառով, որը 1948 թվականին ձևակերպել է ՄԱԿ-ը՝ ցեղասպանություն: Թուրքական իշխանությունները հետևողականորեն և նպատակադրված հասան իրենց նպատակին, որն իրագործվեց զանգվածային կամ տեղական ջարդերով, իսկ 1915-ին ավարտվեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությամբ: Երկու հարց է ծագում ինչո՞ւ, ինչպե՞ս, որոնց իսկույն ևեթ ավելանում է երրորդը, ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ մինչև այժմ այդ ողբերգությունը, որը քարտեզի վրայից մի ամբողջ ժողովուրդ վերացրեց, արձանագրված չէ պատմության էջերում»:

«Ավնարկ Չայոց ցեղասպանության վրա» գիրքը փորձում է, ահա, պատասխանել այս հարցերին: Ճիշտ է, աշխատությունը ցեղասպանության մասին է, բայց, բնականաբար, անհամեմատ լայն ընդգրկում ունի: «Հայաստան», «Հայերն Օսմանյան կայսրությունում», «1894-96թթ. առաջին փուլ, զանգվածային ջարդեր», «Պանթուրքականությունը», «1909.՝ երկրորդ փուլ, Կիլիկյան հոգեհանգիստ» և մյուս գլուխներում, հավատարիմ մնալով պատմական ժամանակագրությանը, հեղինակը զուսպ, պատշաճ լեզվով, անառարկելի համոզականությամբ ներկայացնում է հայ-թուրքական հակամարտության դրդապատճառները, կառավարողների հայատյացությունն ու անհանդուրժողականությունը, որն, ի վերջո, աննախադեպ նախճիրի հանգեցրեց:

Կլոդ Սուքաֆյանը չտրվելով ազգային զգացմունքայնությանը, պահպանելով պատմաբանի անկողմնակալությունը ծանրանում է ոչ թե ջարդերի քստմնելի մանրամասների վրա, այլ ընթերցողի, մանավանդ օտարազգի ընթերցողի իմացության շրջանակները նկատի ունենալով, հանգամանորեն վերլուծում է նախճիրի միջազգային արձագանքները, տարբեր գիտնականների մեկնաբանությունները: Այս տեսակետից ուշագրավ է «Դատավարությունը» գլուխը, որտեղ շարադրված են Թուրքիայի նորընտիր կառավարության՝ 1919 թվականին նախաձեռնած երիտթուրքերի դատավարության մանրամասները:

Թվում է երկասիրողը հայտնի երևույթների է անդրադառնում, բայց նոր, հետաքրքիր փաստեր է վկայակոչում: Առանձնապես ուշագրավ են ցեղասպանության տարիներին Արևմտահայաստանում մնացած միակ արտասահմանյան դիվանագետի՝ հարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Ղևիսի զեկուցագրից և Կոստանդնուպոլսի դեսպանին հղված տեղեկագրերից մեջբերումները, որոնք վերջերս ամբողջությամբ հրա-

տարկվել են Միացյալ Նահանգներում, ֆրանսերեն թարգմանությամբ՝ «Փարիզում»:

Կլոդ Մուսաֆյանի վերլուծական մտածողությունը, բազմիցս մշտնարկման նյութ դարձած դեպքերը նոր մոտեցումով արծարծելու կատարողությունն ի հայտ է գալիս «Պատասխանատուները», «Կրոնական գաղտնիք», «Թուրքական ուրացումը», «Ինչո՞ւ են ժխտում» գլուխներում: Հեղինակը խիստ համոզիչ է նկարագրում, թե ինչպես առաջին աշխարհամարտից հետո միտումնավոր փորձ արվեց կոտորածների հանցանքը միմիայն Գերմանիայի վրա բարդել, թուրքերին կույր գործծիք ներկայացնել, որ նշանակում էր յուրովի՝ բուն ջարդարարների նարդարացնել: Զժխտելով հանդերձ կայզերական Գերմանիայի որոշակի մեղքը, Մուսաֆյանը գտնում է, որ Արևմտահայաստանի հայաթափության, աշխարհով մեկ սփռված տարագիրների անորոշ ներկայի ու ավելի քան անորոշ ապագայի համար պատասխանատու են նաև Անգլիան ու Ֆրանսիան:

Հեղինակը նույնպիսի կոպիտ սխալ է համարում 1915-ի սպանող հայերի քրիստոնյա լինելով, թուրքերի մահմեդական մոլեռանդությամբ, այսինքն՝ «Սրբազան պատերազմով» («Ջիհաթով») արդարացնելը:

Աշխատության «Ինչո՞ւ են ժխտում» գլխում հայերի հողային արդարացի պահանջները հիշատակելով, հատուցման հարց հարուցելով հանդերձ հեղինակը նկատում է, որ եթե ժամանակակից թուրքերն ընդունեն նախնիների ոճիրները, պիտի վերանայեն, վերածեն 20-րդ դարի իրենց պատմությունը: Չէ՞ որ Բեռլինից տեղափոխել, Կոստանդնուպոլսի «Նահատակների բարձունքում» հատուկ դամբարանում հողին են հանձնել ցեղասպանության թիվ մեկ հանցագործի՝ Թալեաթ փաշայի աճյունը, նրա անունով մայրուղիներ են կոչել Անկարայում, էդիրնեում: Ինչ վերաբերում է վերապրող հայերին բնօրրաններից վերջնականապես արտաքսած, Չմյուռնիայի հրկիզումն ու ծովային ջարդը սանձազերծած Աթաթուրքին՝ «թուրքերի հորը», ապա ժամանակակից Թուրքիայում նրան քննադատել ոչ միայն չի թուլատրվում, այլև օրենքով պատժվում է: Ուստի և, եզրակացնում է հեղինակը, ժամանակակից թուրք կառավարողները գրեթե չեն տարբերվում իրենց նախնիներից, նրանք հավատարիմ են մնացել պանթուրանական, ժավալապաշտական նույն նկրտումներին:

Գիրքը հարուստ է լուսանկարներով, որոնց մեծ մասը վերցված են

Բեռլինի տեղեկատվության և փաստավավերագրության հայկական կենտրոնից: Առանձնապես ցնցող տպավորություն են թողնում Էրզրումի՝ 1895 թվականի կոտորածներին զոհ գնացած հայերի զանգվածային թաղումը, թուրքական բանակի հայ զինվորների դիակուլյտերը, ինչպես նաև բռնագաղթի զանազան դրվագները պատկերող՝ Արմին Վեգների, ականատեսներ՝ Յակոբսոնի, Հոֆմանի լուսանկարները, որոնք մեծ մասամբ անժանոթ, կամ սակավ ծանոթ են հանրությանը: Գրքում զետեղված են քարտեզներ:

### Հ.Ֆիրբյուխեր, Հայաստան - 1915. գերմանացի սպայի վկայությունը. Երևան, «Փյունիկ» հրատ., 1995, 64 էջ

Գրքույկի նախաբանը գրել է Միքայել Գրիգորյանը՝ բնաբան ընտրելով Ֆիրբյուխերի հետևյալ տողերը. «Թող այս փոքրիկ գիրքը հայ նահատակների համայնական գերեզմանին դրված համեստ խաչքար դառնա»:

Թարգմանչի՝ Գ.Ջանիկյանի խոսքում համառոտ տեղեկություններ են տրված հեղինակի՝ Ֆիրբյուխերի մասին: Նա ծնունդով գերմանացի է, եղել է Թուրքիայում գերմանական զինվորական առաջելության գերագույն հրամանատար Լիման Սանդերսի թարգմանիչը: Ֆիրբյուխերը ականատես է եղել հայերի ցեղասպանության սահմնկեցնող անցքերին, 1915թ. Գերմանիայում լույս է ընծայել իր գիրքը, որն իսկույն բռնագրավվել ու ոչնչացվել է: Հետագայում վերահրատարակվել է, թարգմանվել ֆրանսերեն:

Գիրքը բաղկացած է 25 կարճ հատվածներից՝ շաղկապված ներքին տրամաբանությամբ: Ունի վերջաբան, երբեմնի Սեծ Հայաստանի գծագիր քարտեզով: Առաջին հատվածի «խաչքար» խորագիրը հեղի-